ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. փետրվարի 14-ից 15-ը ք. Թեհրան գործուղման արդյունքների մասին

1. **Անունը,ազգանունը**

   Հակոբ Վարդանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Իրանի Իսլամական Հանրապետություն, Թեհրան, 2024 թվականի փետրվարի 14-ից փետրվարի 15-ը

4. **Հրավիրող կողմը**

   ԻԻՀ Ծրագրավորման և բյուջետային կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը**

   Մասնակցություն Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի 18-րդ նիստին:

6. **Քննարկված թեմաները**

   Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի 18-րդ նիստի արձանագրության մեջ ներառված էներգետիկ բնագավառի հարցեր:

7. **<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը</u>**

Հանդիպում ԻԻՀ էներգետիկայի նախարարի տեղակալ Հոմայուն Հայերիի հետ: Իրանական կողմից ներկա էին նաև Սանիր ընկերության տնօրենների խորհրդի ղեկավար պրն. Մոհամմադ Բեհզադը, Սանիր ընկերության գործադիր տնօրեն պրն. Հասան Ղոլինեժադը, ԻԻՀ էներգետիկայի նախարարության միջազգային հարցերով մասանգետ պրն. Շիրին:

Քննարկվեցին Հայաստան-Իրան էլեկտրահաղորդման 3-րդ գծի կառուցման ծրագրի ընթացքը, մասնավորապես Նորավան ենթակայանի գողացված 2 ավտոտրանսֆորմատորների փոխարինման հարցը, Ռուսաստանի, Վրաստանի, Հայաստանի և Իրանի միջև «Հյուսիս-Հարավ» միջանցքի նախագիծը կյանքի կոչելու հարցը,Վրաստանի և Իրանի միջև էլեկտրաէներգիայի սեզոնային փոխանակումների հնարավորությունները, «Գազ-Էլեկտարէներգիայի դիմաց» պայմանագրի երկարացումը:

Հանդիպում ԻԻՀ գազի ազգային ընկերության ներկայացուցիչների հետ: Իրանական կողմից հանդիպմանը ներկա էին՝ ԻԻՀ գազի ազգային ընկերության միջազգային հարցերով ղեկավար պրն. Հոսեյն Բիդարմաղզը, ԻԻՀ նավթի նախարարության միջազգային հարցերով փորձագետ տկն. Ամիրին, ԻԻՀ ԱԳՆ եվրասիական երկրների երկրորդ վարչության փորձագետ պրն. Հասան Ասգարին:

Քննարկվեցին Իրան-Հայաստան գազատարի՝ Արաքսի գետանցի շինարարության ծախսերի փոխհատուցման և գազ-էլեկտրաէներգիայի դիմաց ծրագրի երկարաձգման հարցերը: Այցի շրջանակներում նշված հարցի շուրջ վերջնական համաձայնություն ձեռք չբերվեց և քննարկվող հարցը հանվեց միջկառավարական հանձնաժողովի արձանագրությունից:

1+5 ձևաչափով մասնակցել եմ ՀՀ փոխվարչապետ Միհր Գրիգորյանի և ԻԻՀ նախագահի տեղակալ, Ծրագրավորման և բյուջետային կազմակերպության ղեկավար Դավուդ Մանզուրի, ինչպես նաև Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Էբրահիմ Ռայիսիի հետ կազմակերպված հանդիպումներին:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի 18-րդ նիստի ավարտին ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որում արձանագրվել են Հայաստանի և Իրանի միջև համագործակցության փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ուղղություններում, այդ թվում նաև էներգետիկայի բնագավառում հարաբերությունների զարգացմանը միտված պայմանավորվածություններ: Մասնավորապես նշվեց, որ 2024թ.վերջին կավարտվեն Իրան- Հայաստան բարձրավոլտ էլեկտրահաղորդման երրորդ գծի շինարարական աշխատանքները:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Պայմանավորվածություն ձեռք բերվեց ընթացիկ ծրագրերի առաջընթացն ապահովելու նպատակով քննարկվող հարցերի շուրջ աշխատանքային հանդիպումների կազմակերպման ժամկետների և իրականացման ֆորմատի վերաբերյալ:

10. **Ստորագրությունը,ամսաթիվը**

19.02.2024